ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 14 » հուլիսի 2023թ. № 120-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Գումարել Լոռի Բերդ համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ 2023 թվականի հուլիսի 18-ին ժամը 12:00-ին Լոռի Բերդի համայնքապետարանում՝ հետևյալ օրակարգով համաձայն՝ հավելվածի:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.տ

2023թ. հուլիսի 14
գ. Լոռի Բերդ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Անցկացման վայրը. Լոռի Բերդի համայնքապետարան

Անցկացման ժամանակը. 18.07.2023թ. ժամը 12:00-ին

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը:

1. 1. Գումարել Լոռի Բերդ համայնքի ավագանու արտահերթ նիստ 2023թ. հուլիսի 18-ին ժամը 12:00-ին Լոռի Բերդի համայնքապետարանում՝ հետևյալ օրակարգով.

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2023թ. հուլիսի 18-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

(Զեկուցող՝ Ա. Ներսիսյան)

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2023թ. բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին Լոռի Բերդ համայնքի ղեկավարի հաղորդումը ի գիտություն ընդունելու մասին:

(Զեկուցող՝ Ա. Ներսիսյան)

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2023թ. հողային հաշվեկշիռը հաստատելու մասին:

(Զեկուցող՝ Լ. Մամաջանյան)

4) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ ինը բնակավայրերը <<Տաշիր Պլյուս Տեղական Ակտիվ Խումբ>> ոչ ֆորմալ ցանցին ընդգրկելու մասին:

(Զեկուցող՝ Է. Մելիքսեթյան)

5) <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքում 2023 թվականի համար տեղական տուրքերի, վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին>> ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 23.12.2022թ. թիվ 69-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:

(Զեկուցող՝ Վ. Պապիկյան)

6) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման 2023 թվականի ամենամյա և 2023-2027թթ. հնգամյա ծրագրերը հաստատելու մասին:

(Զեկուցող՝ Է. Մելիքսեթյան)

7) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 07.06.2019թ. թիվ 25-Ա որշման 1.2., 1.3., 1.4., 1.6., 1.7. կետերը, 12.07.2019թ. թիվ 29-Ա և 33-Ա որոշումները, 23.09.2021թ. թիվ 51-Ա որոշման 1.3. կետը ուժը կորցրած ճանաչելու և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի գործառնական նշանակությունը փոխելու և աճուրդ-վաճառքով օտարելու մասին:

(Զեկուցող՝ Ա. Ներսիսյան)

2. Ելույթներ, առաջարկություններ:

3. Նիստի փակում:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 12 » հուլիսի 2023թ. № 119-Ա

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ ենթակետերով, ինչպես նաև հիմք ընդունելով Լոռի Բերդ համայնքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 27-ի թիվ 58-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը հաստատելու մասին» Լոռի Բերդ համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 27-ի թիվ 14-Ա որոշումը, ինչպես նաև ԼոռիԲերդ համայնքի ավագանու 2023թ. փետրվարի 17-ի թիվ 11-Ա որոշումը՝

որոշում եմ.

1. Լոռի Բերդ համայնքի բնակչին համայնքի բյուջեից հատկացնել սոցիալական օգնություն համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակչին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կնտ

2023թ. հուլիսի 12
գ. Լոռի Բերդ

Հավելված.
ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավարի
2023թ. հուլիսի 12-ի № 119 -Ա որոշման

Ց Ու Ց Ա Կ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Գայանե Գևորգի Ղազարյան – 20.000 ՀՀ դրամ, որդու 25-օրյա վարժական հավաքներին մասնակցելու կապակցությամբ, գյուղ Լեջան
2. Արևիկ Սամվելի Սուքիասյան – 20.000 ՀՀ դրամ, ամուսնու 25-օրյա վարժական հավաքներին մասնակցելու կապակցությամբ, գյուղ Սվերդլով
3. Հերմինե Ռոբերտի Խեչոյան – 20.000 ՀՀ դրամ, ամուսնու 25-օրյա վարժական հավաքներին մասնակցելու կապակցությամբ, գյուղ Սվերդլով
4. Սվետլանա Միշայի Ավդոյան – 40.000 ՀՀ դրամ, որդու երդման արարողությանը մասնակցելու կապակցությամբ, գյուղ Բովաձոր
5. Լուսինե Սերգեյի Ջանոյան – 40.000 ՀՀ դրամ, , որդու երդման արարողությանը մասնակցելու կապակցությամբ, գյուղ Բովաձոր
6. Արմինե Կարլենի Մելիքյան - 40.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Սվերդլով
7. Սուսաննա Գարեգինի Սարքիսովա - 30.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Ուռուտ
8. Անի Սարիբեկի Գրիգորյան – 40.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Յաղդան
9. Սասուն Արարատի Սաքանյան – 30.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Ագարակ
10. Վրամ Հրաչիկի Ջուլհակյան – 40.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Ուռուտ
11. Արմեն Սմբատի Մկրտչյան – 40.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Սվերդլով
12. Նարինե Վոլոդյայի Հովհաննիսյան – 40.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Սվերդլով
13. Վահե Ռազմիկի Բաբլումյան – 40.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Լեջան
14. Արտաշես Արկադիի Վահրադյան – 40.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Լեջան
15. Ռոբերտ Գուրգենի Չատինյան – 40.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Ագարակ
16. Սլավիկ Սերժիկի Չոբանյան - 40000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Կողես

17. Ամալյա Շավարշի Շահինյան – 40.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Լեջան

18. Վարսենիկ Ռաֆիկի Մշեցյան - 40.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Լոռի Բերդ

19. Հրաչյա Վաչագանի Սարգսյան – 40.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Ուռուտ

20.Հրանտ Վաչագանի Բալայան – 40.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Լոռի Բերդ

21. Վահագն Խալաթի Բարխուդարյան – 40.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Ագարակ

22. Էլեն Արայի Ջանջուղազյան – 40.000 ՀՀ դրամ, Երևանի պետական համալսարանի «Սոցիոլոգիայի» ֆակուլտետի «Մարդկային ռեսուրսների կառավարում» բաժնի մագիստրատուրայի առկա ուսուցման բարձր ցուցանիշներ ցուցաբերելու կապակցությամբ, գյուղ Յաղդան

23. Արեն Լեոնիկի Մելիքյան – 40.000 ՀՀ դրամ, ՀՀ հաշմանդամային սպորտի ֆեդերացիայի պարաբազկամարտի առաջնությունում 1-ին պատվավոր տեղը գրավելու կապակցությամբ, գյուղ Լոռի Բերդ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 06 » հուլիսի 2023թ. № 118-Ա

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՌՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 02 փոտրվարի 2002թ. թիվ 88 որոշման պահանջներով և հաշվի առնելով Անահիտ Սերգեյի Մանուկյանի կողմից 04.07.2023թ. ներկայացված դիմումը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ուռուտ բնակավայրում գտնվող՝ Անահիտ Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող 06-105-0027-0016 կադաստրային ծածկագրով 0.13624 հա մակերեսով հողամասի վրա առկա կիսակառույց բնակելի շինությունների նպատակային նշանակությունը փոխել արտադրական՝ որպես պանրի արտադրամաս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.Տ.

2023թ. հուլիսի 06
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: _____

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 06 » հուլիսի 2023թ. № 116-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լեջան գյուղի 06-038-0016-0007 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Լեջան, 5-րդ փողոց, թիվ 9 բնակելի տուն փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.տ

2023թ. հուլիսի 06
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 06 » հուլիսի 2023թ. № 115-Ա

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 8-րդ կետերի և «ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2023թվականի բյուջեն հաստատելու մասին» Լոռի Բերդ համայնքի անագանու 23.12.2022թ. թիվ 71-Ն որոշման 5-րդ կետի 2-րդ՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Լոռի Բերդ համայնքի 2023թ. բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1. 01-01-01 դասակարգմամբ «կառավարման ապարատ» նախահաշվի 4241 հոդվածով սահմանված 900.000 (ինը հարյուր հազար) դրամը ըստ եռամսյակների սահմանել հետևյալ չափերով.

1-ին եռամսյակ – 300.000 (երեք հարյուր հազար) դրամ,
2-րդ եռամսյակ – 400.000 (չորս հարյուր հազար) դրամ,
3-րդ եռամսյակ – 600.000 (վեց հարյուր հազար) դրամ,
4-րդ եռամսյակ – 900.000 (ինը հարյուր հազար դրամ:

1.2. 01-01-01 դասակարգմամբ «կառավարման ապարատ» նախահաշվի 4264 հոդվածով սահմանված 3.300.000 (երեք միլիոն երեք հարյուր հազար) դրամը ըստ եռամսյակների սահմանել հետևյալ չափերով.

1-ին եռամսյակ – 2.250.000 (երկու միլիոն երկու հարյուր հիսուն հազար) դրամ,
2-րդ եռամսյակ – 2.750.000 (երկու միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) դրամ,
3-րդ եռամսյակ – 3.050.000 (երեք միլիոն հիսուն հազար) դրամ,
4-րդ եռամսյակ – 3.300.000 (երեք միլիոն երեք հարյուր հազար) դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.տ

2023թ. հուլիսի 06
գ. Լոռի Բերդ